

**ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ՝
ՄԻԱՍՏԻՃԱՆ ՀՆԶՑՈՒՆԱՓՈՒՅՑԱՄԲ**

Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Միջին հայերենի՝ բառապաշարում ծավալով և նշանակությամբ կարևորագույն տեղ է գրավում գրաբարյան բառաշերտը, որը բաժանվում է երկու ենթախմբի: Առաջինի մեջ մտնում են այն բառերը, որոնք նույնությամբ, առանց ձևային (հնչյունական) և իմաստային որևէ փոփոխության, անցել են միջին հայերենին: Սրանք ունեն շատ լայն գործածություն և մեծագույն մասով ընդհանրական են հայերենի տարբեր փուլերի համար²: Երկրորդի մեջ մտնում են գրաբարյան այն բառերը, որոնք միջին հայերենում կրել են ձևաիմաստային որևէ փոփոխություն և այս իմաստով նոր իրողություններ են հայերենի զարգացման տվյալ փուլում:

Միջին հայերենի գրաբարյան բառաշերտ անվանումը սույն հոդվածում օգտագործվում է որոշ պայմանականությամբ, քանի որ նկատի են առնվում միայն վերոհիշյալ երկրորդ ենթախմբի բառերը: Վերջիններս, թվով ավելի քան 3000, շուրջ 23000 բառ պարունակող միջին հայերենի բառապաշարում³, ինչպես նաև հայերենի հետագա դրսևորումներում (արևմտահայերեն, արևելահայերեն, բարբառներ) իրենց ունեցած ձևաիմաստային այլևայլ փոփոխություններով և այլ առանձնահատկություններով ցարդ առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Տարժամանակյա կտրվածքով արծարծվող հարցի ամբողջական քննությունը առանձնակի հետաքրքրություն ունի հայոց լեզվի պատմության համար և շատ կողմերով կարող է առավել պարզորոշ դարձնել հայերենի բառապաշարի պատմական զարգացման ներքին օրինաչափություններն ու միտումները:

Միջին հայերենի գրաբարյան բառաշերտում, ըստ նրա կրած ձևաիմաստային փոփոխությունների, կարելի է առանձնացնել երեք հիմնական խումբ՝ ա) միաստիճան հոգնչյունափոխությամբ բառեր, որոնցում կատարվել է ձայնավորների, երկբարբառների, եռբարբառների, բաղաձայնների, մասնիկների ու բառահատվածների միայն մեկ փոփոխություն բառի որևէ մեկ դիրքում (սրանք քանակով գերակշռում են մյուս երկու տեսակներից միասին վերցրած և կազմում ավելի քան 1800 բառ), բ) բազմաստիճան (երկաստիճան, եռաստիճան կց) հնչյունափոխությամբ բառեր, որոնցում կատարվել է երկու և ավելի հնչյունափոխություն բառի տարբեր դիրքերում (սրանց թիվը հասնում է շուրջ 1000-ի), գ) հնչյունափոխված բառեր (թվով ավելի քան 800), որոնք ենթարկվել են միայն իմաստային փոփոխության:

Ինքնին հասկանալի է, որ ներկա ուսումնասիրության հետ որևէ առնչություն չունեն բառաշերտի տեղափոխությամբ առաջացող հնչյունափոխական բազմազան երևույթները: Բննության են առնվելու միայն այն բառերը, որոնց անկախ, ուղիղ ձևերում են հանդես եկել պատմական հնչյունափոխության այլևայլ դրսևորումները՝ (հնչյունի անկում, առնմանում, տարմնանում, դրափոխություն, հավելում և այլն)⁴՝ պայմանավորված միջին հայերենում բազմավանկ բառերի սկզբնավանկի թույլ և վերջնավանկի ուժեղ շեղերի առկայությամբ, ինչպես նաև արտաբերական, հոգեբանական և այլ կարգի գործոններով:

Տեղի սղության պատճառով ներկա հոդվածում քննության են առնվելու միաստիճան հնչյունափոխությամբ այն բառերը, որոնցում կատարվել է միայն ձայնավորների փոփոխություն:

¹ Միջին հայերենի ժամանակաշրջանի վերաբերյալ տե՛ս Գ. Զառուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1989, էջ 6—88, նույնի՝ Միջին հայերենը որպես լեզվական որակ («Բանբեր Երևանի համալսարանի», 1998, № 1):

² Ռ. Ղազարյան, Միջին հայերենի բառապաշարը, Երևան, 1998, էջ 4:

³ Տե՛ս Ն. Մկրտչյանի գրախոսությունը Միջին հայերենի բառարանի վերաբերյալ («Պատմաբանասիրական հանդես», 1998, № 1—2):

Ինչպես վերևում նշվեց, միաստիճան հնչյունափոխությամբ բառերը ոգայիորեն գերակշռում են բազմաստիճան հնչյունափոխությամբ բառերին: Միաստիճանների մեջ բացարձակ գերակշռում են ձայնավորների և բաղաձայնների փոփոխությամբ բառերը, որոնց թիվը հասնում է շուրջ 1900-ի: Ըստ որում առաջինները քանակով 600 են, երկրորդները՝ մոտ 700: Այս կարգի բառերում կատարվել է ձայնավորների և բաղաձայնների չորս տիպի փոփոխություն՝ հնչյունի անկում, հավելում, այլ հնչյունի փոխվելը և դրափոխություն:

1. 1. Ա ձայնավորի փոփոխությամբ բառեր

Ինչպես հայտնի է, գրաբարում ա-ն կայում, չփոփոխվող ձայնավոր էր, եթե նկատի չունենանք եզակի բացառությունները: Մինչդեռ միջին հայերենում այն դատում է ամենակտիվ փոփոխվող ձայնավորներից մեկը: Ձայնավորափոխ ընդամենը 600 բառերի շուրջ 45 տոկոսում կատարվել է ա ձայնավորի փոփոխություն՝ չհաշված երկարաբառներում, եռարարբառներում և այլ պարագաներում նրա ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ ա ձայնավորով փոփոխված բառերը գրեթե այնքան են, որքան մյուս բոլոր ձայնավորներով փոփոխվածները միասին վերցրած: Իր հնչյունափոխական առանձնահատկություններով ա-ն էապես տարբերվում է մյուս ձայնավորներից: Գլխավոր օրինակափոխությունը նրա համար այն է, որ այն հիմնականում սղվում է, իսկ առանձին դեպքերում, սահմանափակ քանակով, փոխվում այլ ձայնավորի: Հարկ է նշել, որ ա ձայնավորի անկման գործում վճռորոշ դեր է խաղացել միջին հայերենին բնորոշ շեշտադրության առանձնահատկությունը: Լեզվաբանները կարծում են, որ միջին հայերենում բազմավանկ բառերն ունեին երկու շեշտ՝ գլխավոր կամ ուժեղ և երկրորդական կամ թույլ: Ըստ որում գլխավորը դրվում էր վերջին, երկրորդականը՝ առաջին վանկի ձայնավորի վրա, որի հետևանքով առաջին և վերջին վանկերում շեշտի տակ գտնվող ա-ն (որքան էլ՝ այլ ձայնավոր) մընում էր անփոփոխ, իսկ միջնավանկում, թույլ արտասանվելու պատճառով, ընկնում էր⁴: Հասկանալի է, որ եռավանկ բառերի մեջ անկումը կատարվել է երկրորդ վանկում, իսկ չորս, հինգ և ավելի վանկ ունեցող բառերում՝ միջին վանկերից որևէ մեկում: Անցնենք մասնավոր օրինակներին:

1. 2. Ա ձայնավորի անկումով բառեր

Ա-ի անկումը հանդես է գալիս հետևյալ պարագաներում:

1. 8. Ամենից առաջ և ամենից հաճախ ամ ստևածանցով բառերում, որոնց թիվը շուրջ յոթ տասնյակ է: Դրանք են՝

անկանիմ—անկնիլ
անուշանալ—անուշնալ
առողջանալ—առողջնալ
բարկանալ—բարկնալ
բարձրանալ—բարձրնալ
բոցանալ—բոցնալ
գոհանալ—գոհնալ
գողանալ—գողնալ
գտանել—գտնել
դիմանալ—դիմնալ
ելանել—ելնել
եղանիմ—եղնիլ
զայրանալ—զայրնալ
թալանալ—թալնալ
թանձրանալ—թանձրնալ
թեթևանալ—թեթևնալ
թուլանալ—թուլնալ
թջանել—թջնել
ժամանել—ժամնել
իմանալ—իմնալ
իջանել—իջնել
լայնանալ—լայննալ
աանալ—աանալ

ուսանալ—ուսնալ
խափանել—խափնել
խոշորանալ—խոշորնալ
խորանալ—խորնալ
ծուլանալ—ծուլնալ
կակղանալ—կակղնալ
կաղանալ—կաղնալ
կանաչանալ—կանաչնալ
կիզանել—կիզնել
կուրանալ—կուրնալ
հարցանել—հարցնել
ձանձրանալ—ձանձրնալ
մեծանալ—մեծնալ
մեռանիմ—մեռնիլ
մթանալ—մթնալ
մոռանալ—մոռնալ
մտանել—մտնել
յուրվանալ—յուրվնալ
յուլանալ—յուլնալ
շողանալ—շողնալ
ողջանալ—ողջնալ
ուսանիմ—ուսնիլ
ուրխանալ—ուրխնալ

⁴ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, Երևան, 1960, էջ 141—142, նաև՝ «Անկարկներ միջին գրական հայերենի պատմության», Բ. Ա. Երևան, 1972, էջ 78—74:

չորանալ—չորնալ
պագանել—պագնել
պիտանալ—պիտնալ
սեւանալ—սեւնալ
սկսանիմ—սկսնիլ
սպանանել—սպաննել
վերանալ—վերնալ

տեսանել—տեսնել
տկարանալ—տկարնալ
ցուցանել—ցուցնել
փայտանալ—փայտնալ
փոքրանալ—փոքրնալ
քաղցրանալ—քաղցրնալ
քարանալ—քարնալ

Կան ոչ շատ օրինակներ, որոնցում առ սուկածանց ընկնում է ամբողջությամբ, որի մասին կխոսվի այլ առիթով:

1. 4. Ծառվանի բառերի երկրորդ վանկում, որոնց թիվը շուրջ հինգ տասնյակ է:

Դրանք են՝
ականատ—ակնատ
աղանի—աղնի
անպարար—անպարար
անալի—անլի
անանուխ—աննուխ
անապակ—անպակ
անասուն—աննուն
անմարդի—անմրդի
անցատր—անցոտր
աշակերտ—աշկերտ
ատաթուր—ատոթուր
ատականք—ատկանք
ատաջի—ատջի
ատաջնորդ—ատջնորդ
աւազոտ—աւզոտ
աքալար—աքար
աքաջի—աքջի
բախտատր—բախտոտր
բաղանիք—բաղնիք
գաւազան—գաւզան
գլխանոց—գլխնոց
երամակ—երմակ
դատատր—դատոտր
թագատր—թազոտր

թեզանիք—թեզնիք
ժամանակ—ժամնակ
լալական—լալկան
խարազան—խարզան
խաւարծիլ—խարոծիլ
կաղապար—կաղպար
կատաղած—կատղած
կարկաչուն—կարկչուն
կարաւան—կարան
կենդանի—կենդնի
մանաճայ—մաննայ
մանանիխ—մաննիխ
մատանի—մատնի
մարգարիտ—մարզրիտ
մարգարտեայ—մարզրտեայ
մեղաւոր—մեղւոր
շատաւիղ—շաուիղ
պահանորդ—պահնորդ
պաշտամունք—պաշտմունք
պարտական—պարտկան
սպիտակուց—սպիտկուց
վարդապետ—վարդպետ
վարձատր—վարձոտր
փոխարէն—փոխրէն
քարաւան—քարան

1. 5. Չորս, հինգ և ավելի վանկ ունեցող բառերում, որտեղ, ինչպես նշվեց, ա-ի սը- դումը տեղի է ունենում առաջին և վերջին վանկերի մեջ գտնվող այս կամ այն վանկում: Այլ կերպ ասած՝ ա-ի սըումն այսպիսի վանկերում ազատ է, չկա որոշակի օրինաչափություն մնալ յուրաքանչյուր առանձին դեպքի համար: Այս բառերի թիվը մոտ երկու տասնյակ է: Դրանք են՝

ամառնաչիճ—ամռնաչիճ
անքաժանելի—անքաժնելի
անճարակություն—անճարկություն
անշոշափելի—անշոշփելի
աշակերտություն—աշկերտություն
ապարանջան—ապրանջան
աստուածություն—աստուծություն
արատատր—արատոտր
արձակություն—արձկություն
գրտակամ—գրակամ

թագատրական—թազոտրական
խանգարումն—խանգրումն
ծարաւություն—ծարտություն
միականի—միակնի,
չորեքշաբաթի—չորեքշաբթի
սլակատություն—սլակտություն
պատառուածք—պատտուածք
սպիտակություն—սպիտկություն
տառապելություն—տառպելություն

1. 6. Ավելի քան երեք տասնյակ բայերի մեջ, որոնք չունեն ան սուկածանց: Իրեն թագմավանկ բառեր՝ սրանցում էլ գործում են միջին հայերենի յուրահատուկ շեշտադրությամբ պայմանավորված ա ձայնաթորի անկման նույն օրինաչափությունները, որոնք դըր- սնորպում էին երեք և ավելի վանկ ունեցող բառերում: Դրանք են՝

պպապաթել—պպպպթել
արձակել—արձկել
բառաչել—բառչել

գանգատիմ—գանգտիլ
դաղարեցուցանել—դաղարեցուցանել
թութախնել—թութխնել

թառամիմ—թառմիլ
 թաւալեցուցանել—թաւեցուցանել
 խաղաղիմ—խաղղիլ
 լաւացուցանել—լաւցուցանել
 խանգարել—խանգրել
 խաւարիմ—խաւրիլ
 կախարդել—կախրդել
 կապուտակիմ—կապուտկիլ
 կառաչել—կառչել
 կատաղել—կատղել
 կատարել—կատրել
 կտրատել—կտրտել
 ճանաչել—ճանչել
 մակարդիմ—մակրդիլ

յստակել—յստկել
 շալակել—շալկել
 շաղախել—շաղխել
 շալաղել—շաղղել
 պակասել—պակսել
 պարապել—պարպել
 պարապիմ—պարպիլ
 սատակիմ—սատկիլ
 վազվազել—վազվզել
 տասպակել—տասպկել
 տուգանել—տուգնել
 ցամաքել—ցամքել
 փաթաթել—փաթթել
 քաղհանել—քաղհնել

1. 7. Շուրջ երեքուկես տասնյակ ա հոդակապով բարդություններում, որպէս պարտադիր կանոն՝ դրանցում ա հոդակապն ընկնում է: Պետք է ասել, որ այստեղ եւ իրեն զգալ է տալիս միջինհալերեւյան շեշտադրությունը: Այս ընդհանուր օրինաչափությունից էա միայն երկու շեղում՝ մարգրտաշար, երկնաքար, որոնք լինելով քառասական՝ կորցրել են ոչ թե ա հոդակապը, այլ երկրորդ վանկի ա-ն: Այդ բառերն են՝

ակնամոմ—ակնմոմ
 անուանադրութիւն—անուանդրութիւն
 անուշահոտ—անուշհոտ
 արինախառն—արինխառն
 բերանացատութիւն—բերանցատութիւն
 գազանանման—գազաննման
 գլխացաւ—գլխցաւ
 դեղաթափ—դեղթափ
 եկեղեցապան—եկեղեցպան
 եղբայրասպանութիւն—եղբայրսպանութիւն
 երկնաքար—երկնքար
 երկասիրաբար—երկսիրաբար
 երկրակալ—երկրկալ
 թխագոյն—թխգոյն
 ծամակալ—ծամկալ
 կտաւագործ—կտաւգործ
 ձեռնագիր—ձեռնգիր

ձկնաքաղ—ձկնքաղ
 ձեռնագրել—ձեռնգրել
 մեծագին—մեծգին
 յովատակ—յովտակ
 նեղաբերան—նեղբերան
 նորածին—նործին
 նորատունկ—նորտունկ
 ողնաշար—ողնշար
 չարակամութիւն—չարկամութիւն
 պղնձագործ—պղնձգործ
 սպիտակագոյն—սպիտակգոյն
 վատակերպ—վատկերպ
 վարդագոյն—վարդգոյն
 ցեցակեր—ցեցկեր
 փոխատու—փոխտու
 քառասուն—քառսուն

2. 1. Ա > ե, ա > է, ա > ի, ա > ու, ա > ը, ա > օ հնչյունափոխությամբ բառեր

Միջին հայերենում ա ձայնավորը կարող էր փոխվել ցանկացած ձայնավորի, չնայած այսպիսի հնչյունափոխությամբ բառերը համեմատաբար քիչ են, բոլորը միասին հազիվ հասնում են շուրջ յոթ տասնյակի: Դրանք են՝

2. 2. Ա > ե (բառի տարբեր դիրքերում)

վերանալ—վերենալ
 պիտանալ—պիտենալ
 վշտանալ—վշտանել
 դիմանալ—դիմանել
 արծաթ—երծաթ
 զարմանալ—զարմանել
 զրահ—զրենհ
 երթալ—երթել
 թերանալ—թերենալ
 թերացուցանել—թերեցուցանել
 լուսանալ—լուսանել
 կարդալ—կարդել

կապարճ—կապերճ
 կաչաղակ—կեչեղակ
 մերկանալ—մերկենալ
 յամել—յեմել
 յառաջ—յեռաջ
 յարդ—յերդ
 յարել—յերել
 վերանալ—վերենալ
 վշտանալ—վշտանել
 պատանք—պատենք
 պիտանալ—պիտենալ
 տխրալի—տխրելի

Աչք բառում ա > ե՝ յեչք: Ա > ե հնչյունափոխության է եհթարկվել նաև զրաբարյան ջախջաղել բայի արմատը ջախջեղվել բառում:

2. 3. Ա > է

աւել—էւել
վարդաջուր—վարդէջուր
վարդագոյն—վարդէգոյն
չաք—չէք
վարդավառ—վարդէվառ

ծանկառ—ծէնկառ
մարգարտաշար—մարգարտէշար
տարակոյս—տարէկոյս
տագր—տէգր
տանկ—տէնկ

Սրանցից մի քանիսում (մարգարտէշար, վարդէգոյն, վարդէջուր) է դարձած ա-
հողակապ է:

2. 4. Ա > ու

գլխացաւութիւն—գլխոցաւութիւն
գոյնագոյն—գոյնուգոյն
ծամ—ծում
իրար—իրուր

խառնամառն—խառնումառն
մկան—մկուն
փաթաթել—փաթութել

Այս օրինակներից մի քանիսում (գլխացաւութիւն, գոյնուգոյն, խառնումառն) ա հո-
ղակապը փոխարինված է ու ձայնավորով:

2. 5. Ա > ը

աղքանոց—աղըքնոց
ամեն—ըմեն
ապապարել—ապըսպրել
դաստակ—դստակ

դատաստան—դատստան
դիւահարել—դիւսհրել
եղբայրասպան—եղբայրըսպան
մարդասպան—մարդըսպան

Վերջին երեք օրինակներում, ինչպես նախորդ երկու դեպքերում, դարձյալ գործ ու-
նենք ա հողակապի համապատասխան հնչյունափոխության հետ:

2. 6. Ա > ի

անդաճել—անդիճել
աշխարհակալ—աշխարհիկալ
ապագովել—ապիգովել
ապակէգործ—ապիկէգործ
ապակէգործութիւն—ապիկէգործութիւն
ապակի—ապիկի
ատակել—ատիկել

գլխակորիլ—գլխիկորիլ
դերձակ—դերձիկ
ծամանակ—ծամանիկ
լուսանալ—լուսանիլ
կատակ—կատիկ
յամել—յիմել
ողաշարք—ողիշարք

Նախավերջին բառը՝ յիմել, գրաբարյան յամել-ի անմիջական հնչյունափոխված ձևը
չէ: Այն ունի իր բնական զարգացման ընթացքը: Նախ յամել-ը հետընթաց առնմանությամբ
յայտնել է յեմել (տե՛ս ա > Ե հնչյունափոխությամբ բառերի ցանկը), ապա՝ յիմել: Ա > Ե > ի
նմանատիպ հնչյունափոխության մասին է խոսում նաև Հ. Մուրադյանն իր ուսումնասի-
րության մեջ: «Ա-ից առաջացած այլ Ե-ն, — գրում է նա, — փոխվել է ի-ի յամեցուցանել >
յամեցնել > յեմեցնել > յիմեցնել»⁵:

2. 7. Ա > ո

անառ—ոճառ
ողաշար—ողոշար
պանդոկ—պոնդոկ

պատճառալ—պատճառով
պարանոց—պարոնոց

2. 8. Օ > ա

Սակավադեպ հանդիպում է նաև ա ձայնավորի հավելում: Մեր տրամադրության տակ
ունենք այս կարգի ընդամենը հինգ օրինակ: Դրանք են՝

անհուն—անահուն
թքնուլ—թքանուլ
լեռնոտն—լեռանոտն

շուք—շուաք
սիսեռն—սիսեառն

8. 1. Ե ձայնավորի փոփոխությամբ բառեր

Հայագիտության համար գաղտնիք չէ, որ Ե-ն և Է-ն գրաբարում սկզբնապես տարբեր
արժեքներ ունեին. առաջինը պարզ, երկրորդը երկբարբառային ձայնավոր էր: Հետագա-
յում, հատկապես միջին հայերենի ժամանակաշրջանում, վերանում են դրանց միջև եղած
արտասանական տարբերությունները, և բառի ցանկացած դիրքում Ե-ն և Է-ն հաճախ փո-

⁵ Տե՛ս «Ակնարկներ...», էջ 76:

խարհում են միմյանց: Հետևաբար, այս գրություններն ունեն հստակ ուղղագրական արժեք, բացառությամբ բառակազմի դիրքի, որտեղ ե-ն առանձին օրինակներում ձեռք էր բերել նոր որակ և արտասանվում էր յե՞:

3. 1. Ե > Է գրությամբ բառեր.

Գրաբարում ե-ով սկսվող ոչ մեծ թվով բառեր միջին հայերենում գրվում էին Է-ով:

Դրանք են՝	երանի—էրանի
եզր—էզեր	երբ—էրբ
եթերային—էթերային	երեց—էրեց
եթե—էթե	երգ—էրգ
եղբայր—էղբայր	երիվար—էրիվար
եղեռնագործ—էղեռնագործ	երկաթ—էրկաթ
եղուկ—էղուկ	երկու—էրկու
ես—էս	երկրորդ—էրկրորդ
երակ—էրակ	եփել—էփել
երամ—էրամ	

Այս օրինակներում բառակազմի գրաբարյան ե-ն չնայած գրվում էր Է տառով, բայց արտասանվում էր գրաբարի պես՝ իբրև պարզ ձայնավոր:

Բառամիջում ե > Է ուղղագրությամբ ուղիղ ձևով բառեր միջին հայերենում գրեթե չեն հանդիպում: Կա նմանատիպ ընդամենը երեք օրինակ՝ երեկ—էրեկ, պետ—պէտ, դեմ—դեմ: Մինչդեռ բառի թեք ձևերում ե > Է գրությամբ բառերը բավական հաճախված են:

3. 3. Ե > յե հնչյունափոխությամբ բառեր:

Կան թվով տասնմեկ բառեր, որոնց սկզբում գրաբարյան ե-ն գրվում է յե, այսինքն ունենցել է յե արտասանությունը, որն արդեն նոր որակ էր գրաբարի համեմատությամբ: Դրանք են՝

երագ—յերագ	երիկունն—յերիկունն
երբ—յերբ	երկաթ—յերկաթ
երդ—յերդ	երկայն—յերկայն
երեսան—յերեսան	երկայնություն—յերկայնություն
երեսանի—յերեսանի	երկու—յերկու
երեք—յերեք	

3. 4. Ե > ի հնչյունափոխությամբ բառեր:

Այս հնչյունափոխությունը հայերենի բոլոր դրսևորումներում ակտիվորեն գործող կալուն օրինաչափություն է, որ տարածված է գլխավորապես շեշտափոխված բառաձևերում: Նման փոփոխություն միջին հայերենում կատարվել է նաև շուրջ երկու տասնյակ չշեշտափոխված բառերում, այսինքն՝ բառի ուղիղ ձևերում, ինչպես՝

ածելել—ածիլել	խաբերայ—խաբիրայ
աւերել—աւիրել	ծոել—ծոիլ
բարեկենդան—բարիկենդան	կանչել—կանչիլ
դեմ—դիմ	ձայնել—ձայնիլ
են—ին	նահանջել—նահանջիլ
երակ—իրակ	ոսկեթել—ոսկիթել
երեք—երիք	ուղեղ—ուղիղ
երեք—իրեք	ուղղել—ուղղիլ
երիկամ—իրիկամ	սկեսուր—սկիսուր
եփել—եփիլ	

3. 5. Ե > ա, ե > ը (գաղաճավանկի չգրվող ը), ե > օ՞ հնչյունափոխությամբ բառեր:

Այսպիսի հնչյունափոխությամբ փաստեր միջին հայերենում ընդհանուր օրինաչափության չէին վերածվել, որի պատճառով էլ բավականին սակավադեպ են հանդիպում: Ահա դրանք՝

ա) Ե > ա

՝ Տե՛ս Ս. Ղազարյան, ԱՉՎ. աշխ., էջ 141—145, Հ. Մարտիչյան, ԱՉՎ. աշխ., էջ 64—67:
 • Զրոյից տարբերելու համար այստեղ և հետագայում օ ձայնավորը տրվելու է աստղանիշով (օ՞):

գերեվարել—գերավարել
 եղբայր—աղբայր
 խնչել—խնչալ
 կեղակարծություն—կաղակարծություն
 կլանել—կլանալ
 մորմոքել—մորմոքալ

շնչալ—շնչալ
 դարմնի—ողորմալի
 սխեռն—սխատն
 սպեղանի—սպաղանի
 փայլել—փայլալ

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներից հինգում (խնչել, կլանել կն) տեղի է ունեցել ե լծորդ ձայնավորի փոփոխություն, իսկ չորսում (աղբայր, գերավարել, կաղակարծություն, սպաղանի) կատարվել է հետընթաց, երկուսում՝ (կլանալ, փայլալ)՝ առաջընթաց աղմմանում:

բ) Ե > Ջ (կամ գաղտնավանկի ղ)

արուեստ—արուեստ
 արուեստաւոր—արուեստաւոր
 խեղդել—խղդել
 եղունգն—ըղունգն

ծեծել—ծրծել
 սղուկեղ—սղակ
 քերթաքաղ—քրթաքաղ

գ) Ե > օ

բարեկենդան—բարկենդան
 գիտեճալ—գիտճալ
 երեսուն—երսուն
 թեթեւութիւն—թեթութիւն
 ի վերայ—վրայ

վազեցուցանել—վազցուցանել
 վախեցուցանել—վախցուցանել
 վայելել—վայլել
 վայելուչ—վայլուչ

Յ. 6. Հանդիպում են մեկական օրինակներ ե > ո, ե > ալ, ե > իա փոփոխությամբ բաներ, ինչպես՝ ցերեկ—ցորեկ, դեռ—դայռ, ոսկեթել—ոսկիաթել: Նախավերջին օրինակում վերականգնվել է սկզբնական այն անհնչյունափոխ կազմությունը, որից համապատասխան հնչյունափոխությամբ առաջացել է ոսկեթել ձևը:

Յ. 7. Է ձայնավորի փոփոխությամբ բառեր:

Չնայած է-ի փոփոխությունն ունի մի քանի դրսևորումներ (է > ի, է > ալ, է > լէ, է > օ, է > օ), սակայն դրանք ընդգրկում են խիստ սահմանափակ թվով բառեր: Դրանք են՝

ա) է > ի

այծենէ—այծենի
 սնդէն—սնդին
 երէց—երից

կիրակէ—կիրակի
 ուռէց—ուռից

բ) է > ալ՝ անէծք—անայծ, կէտ—կայտ, երէ—երալ

գ) է > լէ՝ է՞ր—լէ՞ր

դ) է > օ՞՝ ուղեղ—ուղօղ

ե) է > օ՞՝ պենտակոստէ—պենտակոստ

Արծուէնչան գրաբարյան բառում է-ն փոխարինվել է ա հոդակապով՝ արծուայնչան:

Հ. Մուրադյանի կարծիքով՝ ա հոդակապից հետո յ-ի հավելումը հնչյունական որևէ կանոնի չի ենթարկվում, պարզապես սխալագրություն է՝:

Գ. 1. Ի ձայնավորի փոփոխությամբ բառեր:

Օճշտի տեղափոխությամբ պայմանավորված ի ձայնավորի հնչյունափոխական օրինաչափությունները՝ սղումը կամ ը-ի փոխվելը, ընդհանուր գծերով պահպանվել են հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ ներառյալ միջին հայերենը: Իսկ ինչ վերաբերում է ի-ի պատմական հնչյունափոխությանը, ապա միջին հայերենին վերաբերող ուսումնասիրություններում զրա համար արձանագրված է միայն մեկ իրողություն՝ ի-ն դառնում է ե փոփոխությունը: Սակայն եղած փաստերը վկայում են ի-ի պատմական հնչյունափոխությամ մի շարք այլ դրսևորումներ ևս, որոնց մասին կխոսվի ստորև:

4. Ց. Ի > օ

Այսպիսի հնչյունափոխությամբ բառերի թիվը շուրջ երկու տասնյակ է: Ըստ որում դրանք բոլորն էլ բազմավանկ են, որոնցում ի-ի սղումը կատարվել է բառասկզբում կամ բառավերջում, իսկ երկու օրինակում՝ բառամիջում: Դրանք են՝

⁷ Տե՛ս «Ակնարկներ...», էջ 90—91:

անաղի—անաղ
 անկոխելի—անկոխել
 անքաւելի—անքաւել
 ապրիշում—ապրշում
 արի եկ—արեկ
 արփիական—արփական
 աւելի—աւել
 գոլոշի—գոլոշ
 գոլորշի—գոլորշ
 երկասյրի—երկասյր

ի ձեռն—ձեռն
 ի մէջ—մէջ
 Գստոյտեղի—Գստոյտեղ
 ուստի—ուստ
 ի վայր—վայր
 ի վեր—վեր
 ի վերայ—վերայ
 պիտի—պիտ
 ի տեղ—տեղ

4. 3. Ի > Ե

դրամակշիռ—դրամակշեռ
 ծիղ—ծեղ
 կից—կեց
 միզել—մեզել
 շառաւիղ—շառաւեղ

շիղ—շեղ
 շինել—շենել
 ուղիղ—ուղեղ
 ջիղ—ջեղ
 պիղծ—պեղծ

Նման հնչյունափոխությունն է կատարվել լուսանկարի Գրուսկազմ բառի երկրորդ թաղարիշում (իղձ > եղձ), ինչպես նաև բազմաստիճան հնչյունափոխությանն ենթարկված մոշենմն (գրք. մրջիմն) բառում և փեղցաւ Գրուսկազմ բարդությանն առաջին թաղարիշում:

4. 4. Ի > ա

անխտիր—անխտար
 գլխիկորիլ—գլխակորիլ
 գլխիքաց—գլխաքաց

լինիմ—լինալ
 ճոճիմ—ճոճալ
 յառաջիկայ—յառաջակայ

4. 5. Ի > ու

ապրիշում—ապրուշում
 ծարիր—ծարուր
 ծիծաղիմ—ծիծաղուլ
 կէս ի կէս—կէսուկէս

կննիթ—կննութ
 ջրարբի—ջրարբու
 տանել—տանուլ

4. 6. Ի > ը

ինքնակալ—ընքնակալ
 լինիմ—լնիլ

մի—մը

Այսպիսի փոփոխությունն է կատարվել նաև շունամեայ (գրք. յիսնամեամ) բառի առաջին արմատում:

4. 7. Ի > է

աղիողորմ—աղէողորմ
 երիկուն—երէկուն
 երիվայր—երէվայր

իջեւան—էջեւան
 մի—մէ

Հնչյունափոխությանն մեջ առհասարակ արձանագրված չէ այնպիսի երևույթ, երբ մեկ հնչյունը փոխվում է մեկից ավելի հնչյունների: Մինչդեռ հակառակ գործընթացը հնչյունափոխությանն սովորական դրսևորումներից է (տե՛ս, օրինակ, երկբարբառների, եռաբարբառների, պատճառակաւն ածանցների, սուկածանցների և լն հնչյունափոխությունը): Հետևյալ չորս օրինակներում, ահա, ականատես ենք լինում այդպիսի մի Գոր իրողությանն, երբ ի ձայնավորը փոխվում է երկհնչյունի կամ երկբարբառի, ինչպես՝

անտի—անտոյ
 այտի—այտոյ

ծարիր—ծարիւր
 ծարիր—ծարոյր

Ինչպես կտեսնենք հետո, այս երևույթը մասամբ Գկատվում է նաև այլ ձայնավորների դեպքում:

5. 1. Ու ձայնավորի փոփոխությանն բառեր

Ինչպես հայտնի է. միջին հաւերենի շրջանում, ու-ն դարձել էր պարզ ձայնավոր, ինչպես նաև փոխվել էր վ-ի, որը գրությանն մեջ արտահայտվում էր վ, ւ, աւ տառերով: Երբ

ու-ճ՝ իբրև թույլ, ոչ կայուն ձայնավոր, շեշտազրկվելով ենթարկվում էր երկու կարգի փոփոխության (սղվում էր կամ դառնում ը), ապա բառի ուղիղ ձևերում, անկախ շեշտից, պայմանավորված հնչյունների փոխազդեցությամբ կամ բոլորովին այլ Ռանգամանքներով, կրում էր նաև այլ փոփոխություններ՝ բառասկզբում, բառամիջում և բառավերջում: Ահա՝

5. 2. Ռ > օ

անխախտ—անխախտ	լեզուանի—լեզանի
ապրիշում—ապրիշմ	ուղեղ—ղեղ
արտասուալից—արտասալից	սնուցանող—սնցանող
դժուար—դժար	վայելուչ—վայելչ
դժուարութիւն—դժարութիւն	վաշխառու—վաշխառ

5. 3. Ռ > ը

յուղարկել—յղարկել	ուխտաւոր—ըխտաւոր
յըղարկել	ուխտաւորութիւն—ըխտաւորութիւն
շուրջառ—շըջառ	ուղեղ—ըղեղ
ուղեւորութիւն—ըղեւորութիւն	ուղտապան—ըղտապան

5. 4. Ռ > վ, լ

արտասուալի—արտասալի	թթութիւն—թթվութիւն
արտասուալից—արտասալից	շատրուան—շատրվան
դժուար—դժվար	չուան—չվան

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, ու-ի նման փոփոխությունը, եթե նշկատի չունենանք եզակի դեպքերը, պարտադիր և հնարավոր է միայն ձայնավորից առաջ:

5. 5. Ռ > ռ(օ⁹)

դուռն—դոռն	Ռուբէն—Ռոբէն
դուստր—դոստր	սրունք—սրոնք
թագոճի—թագոճի	սրբոճի—սրբոճի
թափոր—թափոր	տուգանել—տօգանել
թափօր	փութով—փոթով
խոխ—խօխ	փծուն—փծոն
յուղարկել—յողարկել	քարտուղար—քարտողար
շուշան—շօշան	

Նույն փոփոխությունն է կատարվել արեւշատթիւն նորակազմության երկրորդ արմատում, ինչպես նաև նորոջոմն (գրք. նորոջոմն) բառում, որտեղ առկա է նաև մեկ այլ հնչյունափոխություն՝ գ > ք:

5. 6. Ռ > և

Այս փոփոխությունը հիմնականում կատարվել է բայի լծորդության մեջ, ինչպես՝

առնուլ—առնել	լնուլ—լնել
զենուլ—զենել	կալնուլ—կալնել
բաժանումն—բաժանենն	նուազիմ—նեազիմ
թողուլ—թողել	վաղուց—վաղեց
լեսուլ—լեսել	

Այսպիսի փոփոխություն է տեղի ունեցել գրաբարյան ծած արմատում (ծուծ > ծեծ), որը առանձին չէր գործածվում⁹:

5. 7. Ռ > ի

ամուսին—ամիսին	կալնուլ—կալնիլ
գարթնուլ—գարթնիլ	մանուշակ—մամիշակ
թուլանալ—թիլանալ	նուազիմ—նիազիմ

Նման փոփոխություն է կատարվել գրաբարյան վերոհիշյալ ծած արմատում, ինչպես նաև միջհնչյուններից թիթակ/թիթաք բառում, որի թիթ արմատն գրաբարում ունեւր թաթ ձևը և անկախ գործածություն⁹:

⁹ Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. I, Երևան, 1979, էջ 1018, 4. Անաւոյան, Հայերեն արմատական-բառարան, հ. II, Երևան, 1978, էջ 471—472:

⁹ Տե՛ս նույն տեղը, համապատասխանաբար, էջ 820 և 202:

5. 8. Ու > ա

Այս երևույթն ևս հիմնականում դրսևորվել է բայի լծորդ ձայնավորի հնչյունափոխության մեջ, ինչպես՝

զարթնուլ—զարթնալ
ընդելուլ—ընդելնալ
լնուլ—լնալ
յուղարկել—յաղարկել

ուղարկել—աղարկել
ուռնուլ—ուռնալ
ցածնուլ—ցածնալ

5. 9. Օ > ու

եղկելի—եղուկելի

5. 10. Միջին հազերեցի գրաբարյան քառաշերտում կան մի շարք այնպիսի քառեր, որոնցում կատարվել է ա ձայնավորի անսովոր փոփոխություն: Դրանք են՝

ա) Ինչպես գիտենք, գրաբարում ույ > ու հնչյունափոխությունը սովորական երևույթ էր (լուս—լուսատր, թոյն—թունատր, յոյն—յունական և լն), ինչպես արդի հայերենում ույ > ու հնչյունափոխությունը (լուս—լուսավոր, թոյն—թունավոր և լն): Միջին հայերենում, ահա, մի քանի գրաբարյան քառերում կատարվում է նշված հնչյունափոխության հակառակ գործընթացը՝ ու > ույ, այլ կերպ ասած՝ վերականգնվում է նախկին չհնչյունափոխված ու-ը, իսկ այնուհետև նման հնչյունափոխությունը տարածվում է այլ քառերի ու ձայնավորի վրա, որն առնչություն չունի ույ > ու հնչյունափոխության հետ: Այդ քառերն են՝

արթուն—արթոյն
երկու—երկոյ
թուլասրտութիւն—թոյլասրտութիւն
թուլութիւն—թոյլութիւն
լուսատու—լոյսատու

կուսական—կոյսական
ձուլարան—ձոյլարան
շառագունել—շառագոյնել
ուզել (<յուզել)¹⁰—ոյզել
ուտել—ոյտել

բ) Ու > ի

կազդորումն—կազդիրումն

բ) Ու > ով

թուական—թովական

Այստեղ առկա է ու-ի երկհնչյունի փոխվելու փաստը, որի -ն արտահայտվել է վ գրով:

գ) Ու > մ, ու > ոյ

թարձունենել—թարձմենենել
փիլիկուան—փիլիկպան

Ակնհայտ է, որ այս օրինակներում բ և փ երկշրթնային հնչյունների ազդեցությամբ տեղի է ունենել մասնակի առնմանում:

6. 1. Ո ձայնավորի փոփոխությամբ քառեր

Ո ձայնավորը միջին հայերենում, պահպանելով իր գրաբարյան օ արտասահմանությունը քառամիջում և քառավերջում, մասնակի փոփոխության էր ենթարկվել քառավերջում՝ առանձին դեպքերում արտասահմանվելով վօ¹¹:

Գրաբարում ո-ն ևս չհնչյունափոխվող ձայնավորներից էր, որը միջին հայերենում ենթարկվում էր ակտիվ հնչյունափոխության՝ «երբեմն շեշտի փոփոխման հետևանքով, և հաճախ՝ շեշտից անկախ»¹²:

Ո-ի համար միջին հայերենում արձանագրված բոլոր փոփոխությունները (սղումը կամ այլ հնչյունի փոխվելը) արտահայտվել են նաև բառի ուղիղ ձևերում: Ահա՝

6. 2. Ո > օ

Այս փոփոխությունը հանդես է գալիս միայն բազմաձայն քառերի քառամիջում (հազվադեպ նաև քառավերջում), այն դեպքերում, երբ բառը մեկից ավելի ու է ունենում, ինչպես՝

¹⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Բ. II, Երևան, 1981, էջ 589:
¹¹ Տե՛ս Ս. Էագարյանի և Հ. Մուրադյանի նշված աշխատությունների համապատասխան բաժինները:
¹² Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 216:

քննորհություն—բուրություն
 ժողովել—ժողվել
 ծակտել—ծակտել
 ծոծորակ—ծոծրակ
 խոշորություն—խոշրություն
 խորովել—խորվել
 խոցոտել—խոցտել

կոտորած—կոտրած
 կոտորել—կոտրել
 ոլորել—ոլրել
 ողորկություն—ղորկություն
 որովայն—որվայն
 սովորիմ—սովրիլ

6. 3. Ո > ու

բորակ—բուրակ
 գոհար—գուհար
 գումէշ—գումէշ
 դղորդ—դղուրդ
 երկուտասան—երկուտասան
 թողություն—թուղություն
 լոկ—լուկ

կաթողիկոսարան—կաթուղիկոսարան
 կաթողիկոսություն—կաթուղիկոսություն
 որ—ուր
 որիշ—ուրիշ
 ցորեան—ցուրեան
 ծածկոց—ծածկուց

6. 4. Ո > ա

դոքա—դաքա
 խորիսխ—խարիսխ
 խոցոտել—խացատել
 նորընծայ—նարընծայ

նոքա—նաքա
 չորեքտասան—չարեքտասան
 սոքա—սաքա
 փոխանորդ—փախանորդ

Այսպիսի փոփոխությամբ են գործածվել նաև սա, դա, նա դերանունների թեքված ձևերը՝ սորա—սարա, դորա—դարա, նորա—նարա, սոցա—սացա, դոցա—դացա, նոցա—նացա¹³:

Ո > ա հնչյունափոխությունը պետք է արձանագրել նաև վաստան (գրք. ոստան) քառում: Ամենայն հավանականությամբ ոստան-ը սկզբնապես արտասանվել է վոստան, իսկ այնուհետև ո-ն, հնչյունափոխական վերոհիշյալ կանոնի համաձայն, դարձել ա:

6. 5. Ո > օ

Կան մի քանի բառեր, որոնց սկզբում կամ միջում ո-ն գրվում էր նաև օ տառով: Ինքնին հասկանալի է, որ սա ո և օ տառերի արժեքների նույնացման հետևանք էր, իսկ և միջինհայերենյան օ-ի արտաբերումը ներքոհիշյալ բառերում համապատասխանում էր գրաբարյան ո-ի արտասանությանը:

կաթողիկոս—կաթօղիկոս
 կոճ—կօճ
 ողն—օղն
 ողնաշար—օղնաշար
 ոչխար—օչխար

ոսկի—օսկի
 ով—օվ
 որ—օր
 որդի—օրդի

6. 6. Ո > ք, ո > ք, ո > ի

Հնչյունափոխական վերոհիշյալ երևույթներից բացի՝ հազվադեպ հանդիպում են այլ վիայություններ ևս, որոնցում գրաբարյան բառերը կրել են ո > ք, ո > ք, ո > ի կարգի փոփոխություններ, ինչպես՝

թուիլ—թըրիլ
 խոպան—խպան
 կոտոր—կտոր
 կոտորակ—կտորակ

չողալ—չեղալ
 ջողորդ—չեղորդ
 մորուք—միրուք

Այսպիսի հնչյունափոխություն է կատարվել նաև սա, դա, նա դերանունների թեքված ձևերում՝ սորա—սրա, դորա—դրա, նորա—նրա:

Ը ձայնավորի փոփոխությամբ բառեր

Հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվողները նշում են, որ գրաբարյան ք-ն միջին հայերենում համարյա չէր հնչյունափոխվում: Ըստ Տ. Հ. Մուրադյանի՝ «Այդ թերևս պայմանավորված էր նրանով, որ լինելով հայերենի ամենաթույլ ձայնավորը, ք-ն իր վրա

¹³ Տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 291:

էր վերցնում այլ ձայնավորների հնչյունափոխված վանկարարի դերը: Նրա ծանրաթեռնվածությունը ափելի էր մեծանում միջին հայերենի շրջանում, քանի որ այստեղ բացի ու-ից և ի-ից՝ ք-ի էին փոխվում նաև մյուս ձայնավորները:

Այն հատ ու կենտ օրինակները, — շարունակում է նա, — որոնց մեջ վկայվում է ա-ի փոփոխությունը, հիմնականում վերաբերում են գաղտնավանկի և երբեմն էլ բառասկզբի շփական պայթական կապակցությունից առաջ արտասանվող ք-ին»¹⁴:

Այնուհետև Հ. Մուրադյանն ավելացնում է, որ բառասկզբում ք-ի փոփոխությունը պայմանավորված է հաջորդ ձայնավորի բնույթով, որի առնմանությամբ ք-ն կա՛մ նույնանում է նրա հետ, կա՛մ մոտենում ըստ արտասանության տեղի»¹⁵:

Ը ձայնավորի փոփոխության վերաբերյալ արձանագրված այս իրողություններն ընդհանուր ստմամբ հաստատվում են մեր ձեռքի տակ եղած ոչ մեծ քանակությամբ օրինակներով: Նշված օրինակափոխությունները հիմնական գծերով արտացոլված են նաև գրաբարյան բառերի ուղիղ ձևերում, որոնցում տեղի է ունեցել միաստիճան հնչյունափոխություն: Այսպես՝

7. 2. Ը > ի

Այս փոփոխությունը վերաբերում է թե՛ բառասկզբի, թե՛ բառամիջի գաղտնավանկ ք-ին: Մի քանի բառերում, իրոք, ք > ի հնչյունափոխությունը կատարվել է շտ, ստ, սպ հնչյունակապակցություններից առաջ: Ահա՝

բլիթ—բլիթթ	ցշան—ցիշան
երկմտութիւն—երկմիտութիւն	շտապել—յիշտապել
կշռել—կիշռել	սպիտակ—իսպիտակ
կրայ—կիրայ	սպիտակութիւն—իսպիտակութիւն
կրել—կիրել	սպիտակուց—իսպիտակուց
մնալ—մինալ	ստիպալ—իստիպել
յատակ—յիտակ	քշտել—քիշտել
յատակութիւն—յիտակութիւն	

Այս օրինակներից մի քանիսում՝ երկմիտութիւն, կիրել, ցիշան, գրաբարյան ի > ք հընչյունափոխությունը հակառակ ընթացքն է ստացել, այսինքն՝ միտ, կիր, ցիշ արմատներում նախ ի-ն դարձել է գաղտնավանկի ք, իսկ սա էլ հետո փոխվել է ի-ի, և այսպես վերականգնվել են շհնչյունափոխված արմատական ձևերը:

7. 3. Ը > ու

Այսպիսի փոփոխությունն ակատվում է միայն բառամիջում, ինչպես՝

աղմկութիւն—աղմուկութիւն	նրբութիւն—նուրբութիւն
գմբեթ—գումբեթ	շոջակայ—շուրջակայ
գմբեթայարկ—գումբեթայարկ	շոջել—շուրջել
զրուցել—զուրուցել	ջրհոր—շուրհոր
կրայ—կուրայ	պտուկ—պուտուկ

Այս օրինակներից մի քանիսում՝ աղմուկութիւն, զուրուցել, նուրբութիւն, պուտուկ, ակնհայտ է հետադաս լրիվ առնմանության փաստը, իսկ մի քանիսում էլ՝ աղմուկութիւն, նուրբութիւն, շուրջակայ, շուր, ջել, ջուրհոր, ք > ու հնչյունափոխությամբ վերականգնվել են անհնչյունափոխ արմատները:

7. 4. Կան եզակի բնույթի մի քանի այլ փաստեր ևս, որոնցում ք-ն կրել է այլ կարգի փոփոխություններ, ինչպես՝

ա) Ը > Ե

- արկղ—արկեղ
- եզր—եզեր
- թթենի—թեթենի (հետընթաց լրիվ առնմանում)
- կոզոն—կզեոն
- պղծութիւն—պեղծութիւն

Առաջին հայացքից թվում է, թե վերջին օրինակում ևս անմիջապես գործ ունենք ք > Ե հնչյունափոխության հետ: Ասկայն դա, հալանաբար, այդպես չէ: Նախ գրաբարյան պիղծ բառում կատարվել է ի > Ե հնչյունափոխությունը (պիղծ > պեղծ), իսկ այնուհետև հընչյունափոխված պեղծ արմատից կազմվել է պեղծութիւն ածանցաւոր բառը:

Սրանցից երկուսը՝ արկեղ, եզեր, գրաբարյան արկղ և եզր բառերի եզակի սեռական հոլովածներ են, որոնք դարձել են եզակի ուղղականի իմաստով նոր բառեր:

¹⁴ Տե՛ս «Ակնարկներ...», էջ 87:
¹⁵ Տե՛ս նույն տեղը:

Իսկ սրանցից երկուսը՝ արկեղ, եզեր, գրաբարյան արկղ և եզր բառերի եզակի սեռա-
կամ հոլովածներ են, որոնք դարձել են եզակի ուղղակակնի իմաստով նոր բառեր:

բ) Ը > ռ

ուսկր—ուսկոր (առաջընթաց լրիվ առնմանում)

քնքուշ—քոնքուշ (հետընթաց մասնակի առնմանում)

8. 1. Վերը նշված ձայնավորների հնչյունափոխական երևույթներից բացի՝ միջին հա-
յերենում կան ոչ մեծ թվով գրաբարյան այնպիսի բառեր ևս, որոնց սկզբում, միջին մա-
սում կամ վերջում տեղի է ունեցել այս կամ այն ձայնավորների, մասնավորապես ի, ե, ա, ջ հնչյունների հավելում: Ահա՝

8. 2. Օ > ի

անհում—անհիում

գուզ գուզ—գուզ ի գուզ

դա—իդա

գրեճ—գրեհի

իսկ—իսկի

մինչ—մինչի

նա—ինա

սա—իսա

Ի-ի հավելում է տեղի ունեցել նաև անձնական դերանունների եզակի թվի թեք հոլ-
վածների վրա՝ ինձ—ինձի, քեզ—քեզի:

Ինչ վերաբերում է իսա, իդա, ինա դերանվանական ձևերին, ապա դրանց առաջա-
ման վերաբերյալ կա այլ տեսակետ ևս: Պրոֆ. Ս. Ղազարյանը կարծում է, որ նշված ձե-
վերում տեղի է ունեցել ոչ թե ի-ի հավելում, այլ միջինհայերենյան էս, էդ, էն ձևերում
կատարվել է է-ի փոփոխություն և ա-ի հավելում: «Մեր կարծիքով,— գրում է նա,— իսա,
իդա, ինա դերանունները առաջացել են էս, էդ, էն դերանուններից ա-ի ավելացմամբ և ոչ
թե ի—սա, ի—դա, ի—նա քառակապակցություններից, ինչպես կարծում են ոմանք: Հայտնի
է, որ էս, էդ, էն դերանունները առաջացել են այս, այդ, այն դերանունների այ կապակ-
ցության հնչյունափոխությամբ (այ > է): Միջին դարերում շարունակվել է դերանունների
հնչյունափոխման ընթացքը և է-ն տվել է ի, իսկ վերջին ա-ն սա, դա, նա դերանունների
վերջին ա-ի անալոգիայով ավելացել է այդ նոր կազմված դերանուններով»¹⁶:

8. 3. Օ > է

երակ—երեակ

կրայ—կրեայ

չորք—չորեք

8. 4. Օ > ու

ապսպարել—ապսպուարել

խոր—խորու

եղկելի—եղուկելի

խորանալ—խորուանալ

ջախջախ—ջախուջախ

Ու է ավելացել նաև գաղ բայի թուն հրամայականի եզակի թվի բայաձևի վրա՝ ե'կ—
եկո'ս: Սրան գուզահե՛ն՝ հանդիպում է նաև ա-ի հավելումով ձևը՝ ե'կ—եկո'ս: Իսկ եղուկելի
բառն մ տեղի է ունեցել ու > օ հնչյունափոխության հակառակ ընթացքը, որի հետևանքով
վերականգնվել է եղուկ անհնչյունափոխ արմատը:

Խորուանալ բառը հանդիպում է նաև խորվանալ գրությամբ, որը հիմք է տալիս են-
թաղթելու, որ դրանում ավելացած ու-ն արտասանվել է վ կամ՝ նաև վ:

8. 5. Օ > ջ

Այս հնչյունափոխության վերաբերյալ պրոֆ. Ս. Ղազարյանը նկատել է հետևյալը.
«Միջին հայերենում ուժեղ կերպով ընդգծված էր քառասկզբի ա և ր տառերից առաջ որևէ
հնչյուն, հատկապես ջ ավելացնելու կամոնը, որը հատուկ է եղել հայերենին իր զարգաց-
ման վաղ շրջանից սկսած»¹⁷: Այնուհետև բերվում են բազմաթիվ վկայություններ, որոնցում
համապատասխան օրինակները, սակայն, միայն օտար փոխառություններ են:

Օ > ջ հնչյունափոխության վերաբերյալ մեր ձևոքի տակ ունենք ընդամենը երկու ոչ
օտար՝ գրաբարյան քառ, որոնցում նշված հնչյունափոխությունն իրոք տեղի է ունեցե՞
թառակզբի ա ձայնորդից առաջ, ինչպես՝

ռամիկ—ըռամիկ

ռաման—ըռաման

8. 6. Օ > ջ

խառտմունք—խոտամունք

¹⁶ Ս. Ղազարյան, Միջին հայերեն, էջ 205:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 209:

Վերը բերված բազմաբնույթ փաստերը վկայում են, որ միջին հայերենի շրջանում գրաբարյան բառերում կատարված շեշտի տեղափոխությամբ չափամասնավորված ձայնավորների հնչյունափոխական իրողությունները, թեպետ ընդհանուր գծերով արտահայտում էին թիմ հայերենի հնչյունափոխական հիմնական առանձնահատկությունները, իրենց բազմաթիվ դրսևորումներով ավանդական հնչյունափոխությանն անծանոթ բոլորովին նոր երևույթներ էին, որոնք իրենց տարածման աստիճանով մասամբ արդեն իսկ վերածվել էին կայուն օրինաչափության, մասամբ գտնվում էին այդպիսին դառնալու ճանապարհին, մասամբ էլ հանդես էին գալիս իրեն առանձին շեղումներ, մասնակի քաղաքություններ:

Г. М. АВЕТИСЯН — Слова из грабара в среднеармянском с одноступенчатом звукоизменении. — В статье впервые предметом изучения становятся все те слова, в которых произошло одноступенчатое, то есть одно изменение гласных. Отмечается, что это не имеет никакой связи с обусловленными перестановками ударения фонетическими изменениями и касается только проявлений исторических фонетических изменений прямых форм слов. Привлекая соответствующие примеры и статистику, автор представляет целостную картину претерпеваемых в грабаре изменений гласных в ее общих закономерностях и особенностях.